ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի ուղերձը երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ

Շնորհավորում եմ Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ: Ցանկանում եմ, որ բոլոր երեխաներն ապրեն խաղաղ ու երջանիկ ընտանիքներում, շրջապատված լինեն հոգատարությամբ, ծնողական սիրով ու քնքշանքով: Այսօր ՀՀ կառավարությունն անում է ամեն ինչ, որ մեր երեխաներն ունենան անհոգ մանկություն, ստանան լավ կրթություն և ապրեն ավելի բարեկարգ երկրում:

Հայաստանի Հանրապետության փոքրիկ քաղաքացինե՛ր, թո՛ղ բարությունը լինի ձեր կյանքի ուղեկիցը, եղեք առողջ, հաջողակ, ձեր խինդով ու ծիծաղով վարակեք աշխարհը, թո՛ղ իրականանան ձեր բոլոր երազանքները: